

Պարզաբանում

“ՀՀ Կառավարության պատասխանատվության մասին” Հայ Յեղափոխական
Դաշնակցության պատգամավորական խմբակցության հարցապնդման վերաբերյալ

Հարցապնդում 1. Սոցիալ-տնտեսական քաղաքականության հռչակված
ցուցանիշները չապահովելու վերաբերյալ.

*Բացի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հարուցած
դժվարություններից, ինչով է կառավարությունը բացատրում Ազգային ժողովի կողմից
հավանության արժանացած Կառավարության գործունեության ծրագրի, ինչպես նաև իր
իսկ կողմից հաստատված փաստաթղթերի ձախողումները:*

Սոցիալ-տնտեսական քաղաքականության հռչակված ցուցանիշների վերաբերյալ
նմանատիպ հարցադրումներ ներկայացված էին նաև «ՀՀ կառավարության վարած
սոցիալ-տնտեսական քաղաքականության և 2011թ. պետական բյուջեի վերաբերյալ” ՀՅԴ
պատգամավորական խմբակցության տեսակետում, որի վերաբերյալ ՀՀ
կառավարության կողմից ս.թ. հունվարին տրվել է սպառիչ պարզաբանում:
Այնուամենայնիվ, ի լրումն Կառավարության 2011թ-ի հունվարի 20-ի ՀՅԴ
խմբակցությանն ուղղված պատասխանի, հարցի կապակցությամբ հարկ ենք համարում
նշել նաև հետևյալ կարևոր նկատառումները.

- Սոցիալ-տնտեսական ցուցանիշները, գաղտնիք չէ, որ սահմանվում են
ելնելով տնտեսության մեկնարկային իրավիճակից և ապագա սպասումներից:
Պրակտիկայում հնարավոր չէ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ սահմանել և
տնտեսության մեջ առանց խեղաթյուրումներ մտցնելու իրագործել, հաշվի չառնելով
տնտեսության իրավիճակը և դրանից ածանցված **կառավարության բյուջետային
հնարավորությունները**: Ասվածը, մասնավորապես, ճիշտ է նաև սոցիալական
ցուցանիշների մասով, որոնք (աշխատավարձ, կենսաթոշակներ, նպաստներ,
առողջապահական ծախսեր և այլն) սահմանվում և իրագործվում են տնտեսության
զարգացումներին և հնարավորություններին համահունչ: **Հետևաբար, ճգնաժամը
հիմնական խոչընդոտող գործոն է հանդիսացել կառավարության բյուջետային**

հնարավորությունները սահմանափակելու և միջնաժամկետում նախկինում թիրախավորված ցուցանիշներին հասնելու առումով:

• Եթե տնտեսությունում անկում է դիտվում, որի արդյունքում օբյեկտիվորեն կրճատվում են բյուջե ներհոսող միջոցների ծավալները, ապա ակնհայտ է, որ սահմանափակվում են կառավարության հնարավորությունները սոցիալական ցուցանիշների ծրագրված անվանական մակարդակներն ապահովելու գործում: Թերևս, եկամուտների անկման պարագայում հնարավոր է ապահովել սոցիալական ծախսերի աճ՝ աստիճանաբար հասնելով ծրագրված սոցիալական ցուցանիշներին, սակայն պետական բյուջեի պակասուրդի աճի հաշվին, ինչը և կատարեց կառավարությունը 2009թ-ին (սոցիալական բնույթի ծախսերը կառավարությունն աճեցրեց 14-16 տոկոսով, իսկ բյուջեի պակասուրդն այդ տարի հասավ ընդհուպ մինչև ՀՆԱ-ում 7.7 տոկոսը): Սակայն պակասուրդը հնարավոր չէ պահել մշտապես բարձր մակարդակի վրա, քանի որ այն տնտեսությունում կստեղծի հասարակության համար խիստ վտանգավոր անկայունություններ¹: ***Հետևաբար կառավարությունը սոցիալ-տնտեսական ցուցանիշների ապահովման գործում հետևել է պարզ տնտեսագիտական կանոնի՝ ամեն ինչ անել, որպեսզի կանխել տնտեսական անկումը և ապահովել հետճգնաժամային վերականգնում, իսկ երկրի սոցիալ-տնտեսական ցուցանիշներն էլ ապահովել տնտեսական զարգացումներին համահունչ՝ խեղաթյուրումներ չմտցնելով տնտեսության մեջ:***

• Գաղտնիք չէ ևս մեկ իրողություն, որ տնտեսական ճգնաժամը բավականին խորը խոցեց մեր տնտեսությանը, ստեղծելով ավելի մեծ սոցիալական խնդիրներ և կառավարության համար զգալի մարտահրավերներ՝ իրավիճակը շտկելու հարցում: Սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ապահովելու հարցի քննարկման համատեքստում եթե անվիճելի է, որ տնտեսական ճգնաժամը խորը հարված հասցրեց մեր տնտեսությանը ստեղծելով սոցիալական խնդիրներ: Բնականաբար այս առումով կարևոր հարց է, թե մինչճգնաժամային ինչ տնտեսական կառուցվածք էր ժառանգված:

¹ Պետական բյուջեի պակասուրդի մշտական բարձր մակարդակը զարգացող երկրներում ստեղծում է երկու տեսակի անկայունություն. բարձր գնաճ և չարդարացված բարձր արժեզրկում, պարտքի անկայունություն և նախաճգնաժամային իրավիճակ: Այժմ պարտքի անկայունության և հարկաբյուջետային կոնսոլիդացիայի անհրաժեշտության խնդրի առջև են կանգնած Եվրոպական որոշ երկրներ և հատկապես Հունաստանը, որը նույնիսկ Եվրոպական կենտրոնական բանկի բարձր աջակցություն ունեւալով դեռևս չի կարողանում դուրս գալ նախաճգնաժամային իրավիճակից:

Աշխարհի պատմական իրականության մեջ հնարավոր չէ հիշատակել մեկ դեպք, երբ ճգնաժամերը պատճառ լինեին տվյալ երկրի ճգնաժամային տարվա քաղաքականությանը: Սովորաբար տնտեսական անկումներն ու դրա հետևանքով կտրուկ սրացող սոցիալական խնդիրներն արդյունք են լինում երկրների նախորդ տարիների ընթացքում կուտակած տնտեսական ոչ արդյունավետ համակարգային խնդիրների: Երկրների համաշխարհային փորձի վրա հիմնված կա նաև մեկ աքսիոմատիկ ճշմարտություն. այն երկրները, որոնք ունենում են տնտեսության հարաբերականորեն տարազանված և արտահանելի հատվածի վրա հենված կառուցվածք (որտեղ արտադրողական ճյուղերը՝ օրինակ արդյունաբերություն և դրանց սնող այլ ենթաճյուղեր՝ օրինակ գյուղատնտեսությունը, որն արտադրում է հումք արդյունաբերության համար, տնտեսության մեջ ունեն բարձր կշիռ), ավելի դիմադրողական են լինում արտաքին ցնուցումների նկատմամբ՝ ուստի և այդ երկրներում ավելի թույլ է արտահայտվում սոցիալական ցուցանիշների վատթարացումը: ***Հետևաբար այստեղ տեղին է մեջբերել, որ ոչ արտադրողական ճյուղերի վրա հիմնված տնտեսական համակարգը զգայուն է արտաքին ցնուցումներին և անմիջապես բացասաբար արձագանքում, երբ դադարում են արտաքին հատվածից ներուսող միջոցները²:***

• Իսկ ինչպիսին էր իրավիճակը մեզ մոտ. Հայաստանի տնտեսությունում 2001թ-ին ոչ արտահանելի հատվածին բաժին էր ընկնում տնտեսությունում ստեղծվող ավելացված արժեքի 42.9 տոկոսը, իսկ 2008թ-ին այն կազմել է 60.6 տոկոս³: Ակնհայտ է, որ նման տնտեսական կառուցվածքով տնտեսությունն ավելի խոցելի պետք է լիներ արտաքին շոկերից⁴: Ակնհայտ է նաև, որ մինչ ճգնաժամը նշված ութ տարիներին ձեռք

² Տեսակետի մանրամասն հիմնավորումը տես՝ “Do international remittances cause Dutch disease?” By Beja, Jr., Edsel/Ateneo de Manila University 01”MPRA Paper No. 23230, Mongardini, Joannes, and Brett Rayner, 2009; “Armenia: An Assessment of the Real Exchange Rate and Competitiveness” 2011 International Monetary Fund WP/11/20, Anke Weber and Chunfang Yang ; “Grants, Remittances, and the Equilibrium Real Exchange Rate in Sub-Saharan African Countries,” IMF Working Paper No 09/75,

³ Ցուցանիշները վերցված են ՀՀ ԱՎԾ պաշտոնական հրապարակումներից, ըստ ՀՆԱ-ի արտադրության ԵՀՀ-95 Ա17 խմբավորմամբ՝ SՊՏՀԴ (NACE 1.1.) դասակարգմամբ:

⁴ Ոչ արտահանելի հատվածը, սովորաբար համարվում է **կապիտալ շինարարությունը և սպասարկման ծառայությունները** (օրինակ ռեստորանային բիզնեսը) և սովորաբար աշխատում է հետևելով պահանջարկին և ոչ թե արտադրողականությանը: Այսինքն քանի որ այդ ճյուղերում

բերված կառուցվածքը հնարավոր չէ վերափոխել երկու տարիների ընթացքում: ***Հետևաբար, սոցիալ-տնտեսական ցուցանիշների ապահովման տեսանկյունից կարևոր է թե՛ ինչպիսի մեկնարկային իրավիճակից էս սկսում և արդյոք ճգնաժամից հետո տնտեսական հիմնարարները թույլ են տալու ապահովել բարձր ցուցանիշներ:***

- **Եվս մեկ կարևոր հանգամանք.** Ընդունված կանոն է, որ երկրի տնտեսության արտահանելի ամենակարևոր ճյուղը մշակող արդյունաբերությունն է, իսկ մեր երկրում մշակող արդյունաբերությունը մեծ կախվածություն ունի **գյուղատնտեսությունից** (գյուղատնտեսությունը կարևոր նշանակություն ունի նաև սոցիալական տեսանկյունից, բայց դրան կանրադառնանք քիչ հետո): Գյուղատնտեսությունը 2001-2009թթ-ին աճել է միջին հաշվով 6.7 տոկոսով: Առաջին հայացքից թվում է, թե գյուղատնտեսությունը զարգացում է ցուցաբերել, սակայն իրականում գյուղատնտեսությունն ընդհանուր տնտեսության համատեքստում հարաբերականորեն հետընթաց է ապրել, ընդհանուր տնտեսությունում կորցրել է իր հարաբերական լավ դիրքը և հետզհետե ավելի քիչ ռեսուրս է ներհոսել գյուղատնտեսություն, քան այլ ճյուղեր՝ հատկապես ոչ արտահանելի և ոչարտադրողական համարվող կապիտալ շինարարության ճյուղ: Այսպես, գյուղատնտեսության կշիռը տնտեսությունում ստեղծվող ավելացված արժեքում 2001թ-ին կազմել է 25.6 տոկոս այն դեպքում, երբ 2008թ-ին այդ ցուցանիշը խիստ նվազել է մինչ ՀՆԱ 16.3 տոկոսը: Այդ ընթացքում գյուղատնտեսության ճյուղում տեղի է ունեցել նաև զբաղվածների և հողատարածքների կտրուկ նվազում, որը առաջին դեպքում 2008թ-ին ըստ պաշտոնական վիճակագրության ցուցանիշների կազմել է 493 հազար մարդ և 2001թ-ի համեմատ կրճատվել ավելի քան 75 հազարով, իսկ երկրորդ դեպքում՝ ցանքատարածությունները կազմել են 304.5 հազար հեկտար և 2001թ-ի համեմատ կրճատվել 12.6 հազար հեկտարով: Եթե կլաստերային մոտեցմամբ դիտարկենք հումք

արտադրողականության աճը սահմանափակ է, վերջիններիս մոտ իրական ծավալների աճ նկատվում է, եթե առկա է պահանջարկ, իսկ մեր երկրում 2003-2008թթ դիտվել է պահանջարկի ի դեմս տնտեսության տնօրինվող եկամտի (որտեղ զգալի դերակատարություն են ունեցել արտերկրներից հոսող տրանսֆերտները) աննախադեպ աճ հանգեցնելով տնտեսության ոչ արտահանելի հատվածի ծաղկմանը: Սակայն վտանգն այն է, որ եթե մի պահ պահանջարկ խթանող երկիր ներհոսող միջոցները դադարեն, անմիջապես ոչ արտահանելի ոլորտը արձագանքում է և տեղի է ունենում տնտեսության անկում կամ փլուզում: Իսկ փլուզման թափը կախված է ոչ արտահանելի հատվածի չափերից:

մատակարարող և վերամշակող ընդհանուր կլաստերը (գյուղատնտեսություն գումարած վերամշակող արդյունաբերություն), ապա այն ևս հետ նահանջ է ապրել՝ 2001թ-ի ՀՆԱ-ի 40.1 տոկոսից իջնելով մինչև 25.2 տոկոս 2008թ-ին⁵: ***Հետևաբար մինչ ճգնաժամը մեր երկրի տնտեսական համակարգն արդեն իսկ կուտակել էր արտաքին ցնցումներին դիմակայելու թույլ կարողություններ և տնտեսությունում ճշգրտումների զգալի պահանջ, իսկ ճգնաժամն ուղղակի արագացրեց այդ գործընթացները***⁶:

- Սոցիալական ցուցանիշների և աղքատության վատթարացման մասին խոսելիս կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ըստ ԱՎԾ-ի կողմից 2010թ-ին հրապարակված՝ “Հայաստանի սոցիալական պարկերը և աղքատությունը” 2009թ-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների զեկույցի. Հայաստանում աղքատության մակարդակը բարձր է հատկապես գյուղական բնակավայրերում: Կարևոր է նաև այն, որ վերոնշյալ 75 հազար նախկինում գյուղատնտեսությամբ զբաղվողները պետք է կամ դառնային գործազուրկ, կամ աշխատանք գտնեին ոչ արտահանելի հատվածում (մասնավորապես շինարարությունում՝ քանի որ բարձր արտադրողական ճյուղերում պահանջվում է մասնագիտություն և հմտություններ, ուստի գյուղատնտեսության զբաղվածների և բարձր արտադրողական ճյուղերում զբաղվածների փոխարինելիությունը խիստ ցածր է) կամ էլ մեկնեին արտագնա աշխատանքի: Եթե հաշվի առնենք նաև, որ 2009թ-ին մասնավոր տրանսֆերտները և գործոնային եկամուտները կրճատվել են մոտ 30 տոկոսով⁷, որը զգալի մեղմում էր աղքատության ցուցանիշները հատկապես գյուղատնտեսության ոլորտում (մանրամասն տես՝ ՀՀ ԿԲ վերլուծական փաստաթուղթը “2006թ-ին Հայաստանի Հանրապետության տնային տնտեսությունների կողմից արտերկրից ստացվող դրամական փոխանցումների իրական ծավալների գնահատման նպատակով իրականացված հարցման արդյունքները”): Ըստ այդ վերլուծության

⁵ Ըստ Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Մայքլ Պորտերի, յուրաքանչյուր ճյուղի զարգացման համար ամբողջական պատկեր ունենալու և ճիշտ դատողություններ անելու համար, պետք է դիտել այն կլաստերի մեջ, ներառյալ տվյալ ճյուղին օժանդակող (հումք մատակարարող) ճյուղերի զարգացումները: Եթե կլաստերի ներսում ճյուղին օժանդակող այլ ենթաճյուղը գնվառվ կրճատվում է, ապա անխուսափելիորեն դա բացասական է ազդում դիտարկվող ճյուղի մրցունակության վրա):

⁶ Մանրամասն տես՝ “Armenia: An Assessment of the Real Exchange Rate and Competitiveness” 2011 International Monetary Fund WP/11/20, Anke Weber and Chunfang Yang ; “Remittances, Exchange Rate Regimes and the Dutch Disease: A Panel Data Analysis” Emmanuel K.K. Lartey-California State University-Fullerton, Federico S. Mandelman-Federal Reserve Bank of Atlanta, Pablo A. Acosta-Corporación Andina de Fomento February 12, 2008;

⁷ Որպես մեջբերում հիշեցնենք, որ 2009թ-ին կապիտալ շինարարությունը կրճատվել է 41.6 տոկոսով:

հարցված գյուղատնտեսական ընտանիքների 41.5 տոկոսը արտերկրից տրանսֆերտ ու գործոնային եկամուտ ստացող էին: Միննույն ժամանակ հաշվարկ է կատարված, որ գյուղական բնակչության 75 տոկոսը աղքատ է, մնացածը միջին և ապահով խավ՝ եթե արտերկրից ստացվող միջոցները հաշվի չենք առնում, իսկ այդ միջոցները հաշվի առնելու դեպքում աղքատությունը կտրուկ նվազում է մինչև 49 տոկոս⁸): ***Հետևաբար վերոնշյալ 3 դեպքերի արդյունքում էլ օբյեկտիվորեն ճգնաժամից հետո պետք է վատթարանար աղքատության պատկերը՝ կրելով նաև նախորդ տարիների ազդեցությունը:***

Վերջում կցանկանայինք հակիրճ անդրադարձ կատարել հենց աղքատության նվազեցման և սոցիալական լարվածության մեղմման խնդիրներին, որի լուծման առաջին իսկ բեռն անմիջապես ընկնում է բյուջեի վրա: Ուստի կառավարությունն բյուջետային սահմանափակվածության շրջանակներում վերոնշյալ խնդիրների համար լրացուցիչ միջոցներ գտնելու նպատակով արդեն իսկ ձեռնամուխ է եղել նախկինից ժառանգված սոցիալական համակարգերի “մաքրման” և մեծածավալ բյուջետային միջոցներն իրական շահառուներին վերատուղման գործընթացին:

Ամփոփելով, կարող ենք փաստել, որ հիմնական ազդեցությունը սոցիալ-տնտեսական ցուցանիշների վրա եղել է ճգնաժամը և նախկինից ժառանգված արտաքին ցնցումների նկատմամբ խիստ զգայուն տնտեսական համակարգը, ինչպես նաև ոչ արդյունավետ սոցիալական ենթակառուցվածքները, որոնց շտկմանը ձեռնամուխ է եղել կառավարությունը:

Հարցապնդում 2. Հակաճգնաժամային քաղաքականության վերաբերյալ.

Նկատի ունենալով բոլոր ցուցանիշների մասով համատարած վատթարացումը, ինչպես է Կառավարությունը գնահատում իր կողմից վարած հակաճգնաժամային քաղաքականության արդյունավետությունը և հաստատում է արդյոք երկրում ճգնաժամի հաղթահարման մասին հնչեցված գնահատականները:

⁸ Իհարկե հարցման արդյունքներն ամփոփած են 2007թ-ին 2006թ-ի արդյունքների վրա, սակայն կարևոր է այստեղ այն, որ ուսումնասիրությունն ընդհանուր պատկեր է տալիս մասնավոր տրանսֆերտների մեր երկրում ունեցած դերի մասին՝ հատկապես աղքատության ցուցանիշների մասով: Իսկ եթե հաշվի առնենք, որ զլոբալ առումով 2007-2008թթ-ին տրանսֆերտները միջին հաշվով աճել են 31.2 տոկոսով, ինչն ավելի բարձր է քան նվաճ տարիների ներքին տնտեսությունում ստեղծվող եկամուտների աճը (միջին հաշվով 15.9 տոկոս), ապա կարելի է փաստել, որ այլ հավասար պայմաններում մասնավոր տրանսֆերտների տնտեսությունում ունեցած դերակատարումը առնվազն չի փոփոխվել:

Ճգնաժամը ընդգծեց Հայաստանի տնտեսությունում առկա խնդիրները և անարդյունավետ կառուցվածքը վերափոխելու անհրաժեշտությունը: Հետևաբար կառավարության հակաճգնաժամային քաղաքականությունը միտված էր ոչ միայն անկմանը դիմակայելու, սոցիալական լարվածությունը թուլացնելու, այլ նաև ապագայում արդյունավետ և բազմատեսակավորված (դիվերսիֆիկացված), արտաքին ցնցումներին դիմակայելու ունակ տնտեսական կառուցվածք ունենալուն, որտեղ առաջնորդող պետք է լինի տնտեսության արտահանելի հատվածը:

ՀՀ կառավարության կողմից իրականացված հակաճգնաժամային քաղաքականությունն ունեցել է պարզ տրամաբանություն և հստակ ուղղություններ: Տրամաբանությունն այն էր, որ մասնավոր հատվածի ֆինանսական հոսքերի բացակայության բացը տնտեսությունում հնարավորին չափ լրացնի պետությունը, այսպիսով նպաստելով ամբողջական պահանջարկի վերականգնմանը: Հակաճգնաժամային քաղաքականության հիմնական ուղղություններն էին`

- Օժանդակություն ցույց տալ համակարգաստեղծ ձեռնարկություններին (տրամադրվել է մոտ 23 մլրդ դրամ բյուջետային վարկ ապահովելով այս ձեռնարկությունների անխափան աշխատանքը և բացառելով աշխատատեղերի կրճատումը),

- Օժանդակություն ցույց տալ արտահանման կամ ներմուծման փոխարինման պոտենցիալ ունեցող ձեռնարկություններին (ըստ բիզնես ծրագրերի տրամադրվել է նշյալ ուղղվածություն ունեցող ձեռնարկություններին շուրջ 30 մլրդ դրամի վարկ),

- Օժանդակություն ցույց տալ հիպոթեքային շուկային (հիպոթեքային շուկան աշխուժացնելու համար հատկացվել է շուրջ 12 մլրդ դրամի վարկ),

- Փոքրացնել պետության վարչական միջամտությունները տնտեսվարողների համար (մինչև 70 մլն դրամի շրջանառություն ունեցող ձեռնարկությունների մոտ կասեցվել են տեսչական ստուգումները),

- Հնարավորինս պահպանել աշխատատեղերը և հիմքեր ստեղծել ապագայում նոր աշխատատեղերի ստեղծման համար` հիմնականում արտահանելի հատվածում (տնտեսության ընդհանուր պատկերի մասին տեղեկատվությունը ներկայացված է ստորև),

- Պահպանել սոցիալական ուղղվածության ծրագրերի իրականացման առաջնահերթությունը (սոցիալական բնույթի ծախսերը չեն կրճատվել, իսկ ճգնաժամի տարում ապահովվել է վերջիններիս գծով 14-16 տոկոս աճ),

- Բարելավել գործարար միջավայրը (մանրամասն տես՝ “ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումներ. իրականացման գործընթաց” ամփոփ հաշվետվությունը),

- Լայնածավալ ծրագրեր իրականացնել ենթակառուցվածքների բարելավման մասով (ավտոճանապարհների կառուցում, ոռոգման և խմելու ջրի համակարգերի արդիականացում և նմանատիպ կապիտալ բնույթի ծախսերը 2009-2010թթ միջին հաշվով կազմել են 206 մլրդ դրամ):

Վերոնշյալ բոլոր ուղղությունների գծով կառավարությունն արել է այն, ինչ հնարավոր էր կատարել բյուջետային սահմանափակվածության և տնտեսական իրավիճակի սահամաններում⁹: Արդյունքում կարելի է փաստել, որ հակաճգնաժամային նպատակադրումները հնարավորինս իրագործվել են, որի հաստատումը կարող է լինել նաև գրանցված արդյունքը:

2010 թվականին տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում արձանագրել ենք աճի ցուցանիշներ՝ բացի գյուղատնտեսությունից, որի անկումը (15.7%) պայմանավորված էր գերազանցապես անբարենպաստ բնակլիմայական պայմանների արդյունքում բուսաբուծության ենթաճյուղի անկմամբ: Ի տարբերություն նախաճգնաժամային տարիների, երբ տնտեսական աճը պայմանավորված էր հիմնականում շինարարության աճով, 2010 թվականի արդյունքներով տնտեսության հիմնական շարժիչ ուժը հանդիսացել են արդյունաբերությունը և ծառայությունները: Ընդ որում, արդյունաբերության ճյուղն ապահովել է 2.1 տոկոս տնտեսական աճի 1.4 տոկոսային կետը՝ դրսևորելով տարեկան 10 տոկոս իրական աճ, այդ թվում մշակող արդյունաբերությունում՝ 13.6 տոկոս: Տեղին է նկատել, որ 2009թ-ի կառավարության օժանդակության ուղղությունները նախանշելիս մեծ ուշադրություն է դարձվել արդյունաբերությանը՝ որպես տնտեսության արտահանելի ճյուղ: Այդ առումով պետք է նշել, որ արտահանումը 2010թ-ին աճել է 42.4 տոկոսով, իսկ առանց հանքահումքային և ոչ թանկարժեք մետաղների արտահանման (որոնց ևս կառավարությունն օժանդակություն է ցույց տվել)՝ 20.7 տոկոս: Միայն պատրաստի սննդի, որը մեր մշակող արդյունաբերության գերակշիռ մասն է կազմում, արտահանումն աճել է 31.7 տոկոսով:

⁹ մանրամասն տես “ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումներ. իրականացման գործընթաց” ամփոփ հաշվետվությունը:

ՀՆԱ կառուցվածքի տեսանկյունից՝ ի տարբերություն շինարարության ճյուղի տեսակարար կշռի նվազման (2010թ-ին 17.8%, 2008-ին՝ 25.5), ավելացել են արդյունաբերության (2010թ-ին 15%, 2008-ին՝ 14.3) և ծառայությունների (2010թ-ին 42.2%, 2008-ին՝ 31.6) տեսակարար կշիռները: Ակնկալվում է, որ այդ միտումները կպահպանվեն նաև հաջորդ տարիներին և չպետք է մոռանալ, որ տնտեսության դիվերսիֆիկացումը երկարաժամկետ և մեծ ջանքեր պահանջող խնդիր է:

Աշխատանքի շուկայի մասով. ՀՀ կառավարության կողմից իրականացված հակաճգնաժամային միջոցառումներն ի թիվս համախառն պահանջարկը խթանող մի շարք միջոցառումների, իրականացվել է նաև զբաղվածության ընդլայնման միջոցառումներ, որոնք հիմնականում մեկնարկեցին 2009 թվականի երկրորդ կեսից, արդյունքում տնտեսությունում զբաղվածների թվի էական կրճատում չարձանագրվեց¹⁰, իսկ լազային ազդեցությամբ 2010 թվականի ընթացքում պաշտոնական գործազրկության մակարդակը դրսևորեց նվազման միտում՝ տարվա սկզբի 7.3 տոկոսից իջնելով 7 տոկոսի: Ընդ որում, 2010 թվականին նախորդ տարվա համեմատ զբաղվածների թիվը աճել է 1.3 տոկոսով:

Վերջում կցանկանայինք հարցապնդման մեջ տեղ գտած որոշ մտքերի վերաբերյալ նշել հետևյալը: Նախ չենք կիսում այն տեսակետը, որ տնտեսական բոլոր ցուցանիշների գծով արձանագրված է համատարած վատթարացում, քանի որ վերը նշված թվային տվյալները հակառակն են փաստում: Ընդ որում, մինչճգնաժամային ՀՆԱ-ի 2008թ-ի մակարդակային համեմատություն կատարելու և համադրելի պատկեր ստանալու համար պետք է նաև համադրելի դարձնել տնտեսության համար կարևոր մի շարք գործոնների մակարդակները: Մասնավորապես, հարցապնդման մեջ անտեսված է տնտեսություն ներհոսող մասնավոր տրանսֆերտների մակարդակների տարբերությունը, որոնք մինչ ճգնաժամը էական դերակատարություն են ունեցել

¹⁰ Նշենք, որ ճգնաժամ ապրած բոլոր երկրներում և հատկապես զարգացած երկրներում ճգնաժամի տարում գրանցվեց գործազրկության կտրուկ աճ: Մասնավորապես, ԱՄՆ կառավարության կողմից կատարվեց մեծածավալ ներարկումները (բյուջեի դեֆիցիտի տեսքով) տնտեսությունում՝ կազմել են շուրջ 1468.4 մլրդ ԱՄՆ դոլոր, կամ 2 անգամ ավելի քան նախորդ՝ 2008 թվականին, սակայն գործազրկությունը աճեց 3.5 տոկոսային կետով և կազմեց 9.3 տոկոս, և դեռ շարունակում է պահպանվել այդ բարձր մակարդակը (2010 թվականի համար այն կազմում է 9.6 տոկոս):

հատկապես կապիտալ շինարարության աճի ցուցանիշներում: Իսկ մասնավոր տրանսֆերտները և գործոնային եկամուտները, ինչպես արդեն վերը նշել ենք՝ 2009թ-ին նախորդ տարվա համեմատ կրճատվել են մոտ 30 տոկոսով, իսկ 2010թ-ին աճել ընդամենը 11.5 տոկոսով, այն դեպքում երբ 2008թ-ի մակարդակն ապահովելու համար անհրաժեշտ էր, որպեսզի դիտվեր առնվազն 42 տոկոս աճ:

Հակաճգնաժամային քաղաքականության վերաբերյալ Հարցապնդման մեջ նշված՝ “2012 թվականը Հայաստանը դիմավորելու է ավելի փոքր ՀՆԱ-ով, քան եղել է 2008 թվականին” դիտարկման վերաբերյալ նշենք, որ այդ եզրակացությունը արվել է դոլարային արտահայտությամբ անվանական ՀՆԱ-ների համեմատության արդյունքում: Սովորաբար դոլարային արտահայտությամբ մակրոտնտեսական ցուցանիշներն օգտագործվում են այլ երկրների նույն ցուցանիշների հետ համեմատելու համար, իսկ ներքին տնտեսական զարգացումները նկարագրելու համար նպատակահարմար է կիրառել դրամային արտահայտությամբ մակրոտնտեսական ցուցանիշներ, քանի որ տարբեր երկրների արժույթներով արտահայտված ցուցանիշը կարող է տարբեր մեծություններ ընդունել՝ կախված տվյալ արժույթի արժեվորման կամ արժեզրկման մակարդակից: Ըստ երկրների համեմատականներն վկայում են, որ 2010թ-ի ՀՆԱ-ն դոլարային աճերով դեռևս չի վերականգնել 2008թ-ի մակարդակը ոչ միայն Հայաստանում, այլ նաև մի շարք ԱՊՀ այլ երկրներում, այդ թվում Վրաստանում, Ռուսաստանում, Ռուսաստանում և այլն: Միաժամանակ նշենք, որ այդ երկրներում 2010թ-ին նախնական գնահատականներով վերականգնվել է 2008թ-ի դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի ծավալների համապատասխանաբար՝ 88, 76 և 88 տոկոսը:

ՀՀ պետական պարտքի վերաբերյալ հարկ ենք համարում նշել, որ 2010 թվականի տարեվերջին այն կազմել է ՀՆԱ-ի 35.6 տոկոսը և առաջիկա տարիներին հեռու է լինելու զարգացող երկրների 60 տոկոս վտանգավորության սահմանագծից:

Պարտքի կայունության նպատակով ՀՀ ՖՆ կողմից կատարվել է Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից համատեղ մշակված պարտքի կայունության համապարփակ և բազմակողմանի վերլուծություն: Այդ վերլուծության արդյունքներով Հայաստանը գնահատվում է չափավոր ռիսկային, իսկ

արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները գտնվում են նվազ և միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշների սահմաններում: Եթե հաշվի առնենք, որ ներգրաված արտաքին միջոցների մի որոշ մասն ուղղվել է տնտեսության ենթավարկավորմանը և վարկի այդ հատվածի մարումն իրականացվելու է ենթավարկավորված միջոցների հաշվին, ապա կարելի է ասել, որ պարտքը բնութագրող ցուցանիշները նվազ ռիսկային են: Թվային արտահայտությամբ պատկերը հետևյալն է. 2010թ-ին կառավարության ընդհանուր արտաքին պարտքն առանց ենթավարկերի ՀՆԱ-ում կազմել է 21.6 տոկոս, իսկ 2011թ-ին կկազմի 25.3 տոկոս, իսկ համապատասխան ցուցանիշները ներառյալ ենթավարկերը համապատասխանաբար կազմում են 29.2 և 32.6 տոկոս:

Ամփոփելով` ճգնաժամը հաղթահարված է, տնտեսությունը թևակոխել է վերելքի փուլ` ի դեմս գրանցված տնտեսական աճի, սակայն ճգնաժամի հետևանքները և սպասճառները ամբողջությամբ շտկված չեն, ինչը պահանջում է շատ ավելի երկար ժամանակահատված:

Հարցապնդում 3. ՀՀ կառավարության նախաձեռնած մի շարք իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը և օրենսդրությանը համապատասխանելու վերաբերյալ.

Որքանով է նման իրավական ակտերի ընդունումն ու կիրառումը համապատասխանում ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի և ՀՀ օրենքների պահանջներին: ՈՒՆԻ Կառավարությունը գնահատական, թե հայեցողական կարգով հարկային և այլ բնույթի արտոնությունների տրամադրումը ինչպես է ազդում տնտեսության մրցակցային իրավիճակի վրա և արդյոք նպատակահարմար չէ արտոնությունները տրամադրել ըստ ոլորտների՝ ՀՀ օրենքների պահանջներին բավարարող բոլոր տնտեսվարողներին:

Նախ կցանկանայինք նշել, որ ՀՀ կառավարության կողմից առաջարկված օրենսդրական նախաձեռնությունները չեն հակասում ՀՀ սահմանադրության 83.5 հոդվածի դրույթներին: ՀՀ Սահմանադրության 83.5-րդ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածների համաձայն բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը, իրավաբանական անձանց, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց գործունեության նկատմամբ հսկողություն ու վերահսկողություն (այդ թվում՝ ստուգում, ուսումնասիրություն, տեսչական ստուգում) իրականացնելու դեպքերը, պայմանները և կարգը և այլն:

Նշված սահմանափակումները սահմանվել են հենց **օրենքներով**, իսկ ՀՀ կառավարությանը օրենքի համաձայն իրավունք է վերապահվել սահմանել օրենքից բխող համապատասխան կարգեր և ընթացակարգեր, ինչպես բոլոր այլ ոլորտներում:

Հետևաբար, համապատասխան օրենքներից բխող ՀՀ կառավարության որոշումները ֆիզիկական և իրավաբանական անձանց համար իրավունքների որևէ

սահամանփակումներ կամ նրանց նկատմամբ որևէ խտրական մոտեցում չեն նախատեսում:

ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 380-Ա որոշմամբ ամրագրված սկզբունքների համաձայն՝ ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականության ուղղություններից մեկը երկրի տնտեսության տևական կայուն զարգացման գրավականի բարձրացումն է, և տնտեսական խթանները դեպի արտադրողական ոլորտներ ուղղորդելը: Նպատակը՝ նախկին, նախաճգնաժամային տնտեսական կառուցվածքի վերափոխումն է և արտաքին ցնցումներին դիմակայելու կարող նոր տնտեսական արդյունավետ կառուցվածքի ստեղծումը: Այդ նպատակով, սկսած 2008 թվականից առ այսօր, ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններից են եղել նոր տեխնոլոգիաների ներգրավման միջոցով արտադրական կարողությունների ընդլայնումը և արտահանման խթանումը՝ աջակցելով համաշխարհային չափանիշներին համապատասխանող հայկական ընկերությունների կայացմանը: Այդ չափանիշները և դրանց հիման վրա ներդրումային ծրագրերի գնահատումը հաստատված է, թափանցիկ է և հայեցողական մոտեցում չի կրում:

Թերևս այստեղ կարևոր է այն, որ կառավարության համար կարևոր չէ ոլորտը՝ այլ կարևոր է, որ արտոնությունից օգտվող ձեռնարկությունը լինի մրցունակ, ներդրումային ծրագիրը լինի հեռանկարային և կարողանա արտահանել կամ ներմուծմանը փոխարինել, որպեսզի հաջողվի տնտեսության կառուցվածքի վերափոխման գործընթացը և հնարավորինս արագ կատարել արտաքին անհաշվեկշռվածության ճշգրտումը: Ուստի այս խնդրի իրագործման շրջանակներում ՀՀ կառավարությունը համապատասխան գործիքներ է կիրառում: «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված արտոնությունը կիրառվում է ՀՀ կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի թիվ 600-Ն որոշմամբ հաստատված չափանիշների հիման վրա գնահատված՝ ներդրումային ծրագիր ներկայացնող բոլոր կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար: Նշված որոշմամբ սահմանված չափանիշների հիման վրա շահագրգիռ գերատեսչությունների (-

ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե) կողմից տրվող գնահատականների միջին թվաքանականի հիման վրա որոշվում է ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպության ավելացված արժեքի հարկի վճարման արտոնության տրամադրման նպատակահարմարությունը: Օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պայմանագիր է կնքում ներդրումային ծրագիր իրականացնող կազմակերպության հետ և վերահսկում ներդրումային ծրագրի իրականացումը:

Նմանատիպ մոտեցում է նախատեսվում կիրառել նաև ՀՀ մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված՝ ներդրումային ծրագրերի շրջանակներում ներմուծվող ապրանքների «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմը ՀՀ կառավարության թույլատրած ժամկետով ձևակերպելու նպատակահարմարությունը որոշելու համար:

Այդ կապակցությամբ նշենք, որ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից ներկայացրած տվյալների համաձայն նշված արտոնությունները ուժի մեջ մտնելուց հետո.

- ՀՀ կառավարության կողմից աջակցություն են ստացել թվով 13 ընկերությունների 14 ներդրումային ծրագրեր, իսկ հավանության արժանացած ծրագրերի ընդհանուր կանխատեսվող ներդրումները կազմում են մոտ 58.05 մլրդ ՀՀ դրամ, որոնց շնորհիվ կստեղծվեն մոտ 1540 նոր աշխատատեղեր (950 աշխատատեղեր արդեն ստեղծվել են): Այս ծրագրերն առնչվում են ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներին՝ սննդարդյունաբերություն, հանքարդյունաբերություն, դեղագործություն և ծառայությունների մատուցում:

- Ընկերությունների կողմից «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների մաքսային ռեժիմի ժամկետի երկարաձգումը թույլ է տալիս շարունակել իրենց բնականոն գործունեությունը և ապահովել արդեն իսկ ստեղծված աշխատատեղերի պահպանումը, որոնց թիվը կազմում է մոտ 1150:

Հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու վերաբերյալ Հարցապնդման մեջ բարձրացված հարցի կապակցությամբ հայտնում ենք, որ «պետական և

համայնքային սեփականության հողերը որոշ սուբյեկտներին անհատույց տրամադրելու մասին» գործադրի կողմից որոշում կայացնելու իրավասությունը նախատեսված է եղել ՀՀ հողային օրենսգրքի ընդունման պահից:

Ինչ վերաբերում է ՀՀ հողային օրենսգրքի 65-րդ հոդվածում կատարված վերջին փոփոխությանը (21.12.10թ. ՀՕ-5-Ն օրենք), ապա հայտնում ենք, որ վերոհիշյալ փոփոխությամբ սահմանվել է, որ «պետության սեփականություն հանդիսացող հողամասերը կառավարության որոշմամբ, իսկ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ կառավարության համաձայնությամբ, նվիրաբերության պայմանագրով անհատույց սեփականության իրավունքով կարող են տրամադրվել սոցիալական, կամ բարեգործական, կամ Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով»:

ՀՀ հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված պահանջներից միանշանակ երևում է, որ պետության սեփականություն հանդիսացող հողամասերը հենց այնպես չեն տրամադրվում որոշակի անձանց, այլ տրամադրվում են միայն նվիրաբերության պայմանագրով և միմիայն սոցիալական, բարեգործական և ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ներդրումային ծրագրեր իրականացնելու նպատակով:

Ինչ վերաբերում է ոլորտային արտոնությունների սահմանման վերաբերյալ Հարցապնդման մեջ կատարված առաջարկությանը, ապա չբացատրելով ոլորտներին տրվող արտոնությունների մոտեցումը (նմանատիպ ոլորտային արտոնություն ՀՀ կառավարությունը տվել է գորգագործությանը, ոսկերչությանն ու ադամանդագործությանը¹¹), հայտնում ենք, որ կառավարությունը տնտեսական արագ վերականգնում ապահովելու նկատառումներից ելնելով ցուցաբերել է ավելի լայն մոտեցում՝ նախապատվություն տալով ձեռնարկությունների արտահանման ուղղվածությանը, մրցունակությանը և արտադրողականությանը:

¹¹ Միջազգային փորձը փաստում է, որ ոլորտային արտոնություն որոշ դեպքերում տրվում է, եթե զբաղվածության կլանումը այդ ոլորտում բարձր է, իսկ շահութաբերության մակարդակը ցածր, այսինքն դա կատարվում է հիմնականում զբաղվածության կամ սոցիալական բնույթի խնդիրներ լուծելու նկատառումներից:

Հարցապնդում 4. Գնաճի զսպման քաղաքականության վերաբերյալ.

Ինչպես է Կառավարությունը գնահատում գնաճի զսպման վարվող քաղաքականությունը, ինչպես է պատկերացնում ՀՀ Նախագահի կողմից առաջադրված խնդրի լուծումը, ինչ քայլեր է իրականացնում այդ ուղղությամբ:

Ձևավորված բարձր գնաճային միջավայրը պայմանավորող հիմնական գործոնները երկուսն են՝ հիմնական պարենային և հումքային ապրանքների միջազգային գների բարձրացումը և նախորդ տարի գյուղատնտեսական ապրանքների առաջարկի աննախադեպ անկման հետևանքով վերջիններիս բարձր գների պահպանումը: Եթե խոսենք թվերով, ապա 2010թ-ի 9.4 տոկոս գնաճի միայն 5 տոկոսային կետը եղել է ի հաշվի գյուղմթերքների գների աճի, իսկ 2.4 տոկոսային կետը՝ ներմուծվող ապրանքների գների աճի: Երկուսն էլ առաջարկից եկող գնաճ են և տնտեսագիտական ճիշտ մոտեցումն այն, որ

1. Պահանջարկի կառավարումը լինի խիստ պահպանողական, քանի որ առաջարկի գնաճը կարող է ստեղծել գնաճային սպասումներ ու եթե այդ սպասումները սնվեն լրացուցիչ պահանջարկի աճով, ապա մեծ է ռիսկը որ գործի դրվի գնաճի պարուրակը,
2. Նպաստել ներքին տնտեսությունում ստեղծվող առաջարկի աճին՝ հատկապես այն ոլորտում որտեղից գալիս են գնաճային ռիսկերը:

Առաջին ուղղության հետ կապված, պետք է նշել որ գնաճային միջավայրը թուլացնելու նպատակով ԿԲ-ը տարեսկզբից որդեգրել է դրամավարկային պայմանների խստացման քաղաքականություն՝ բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը և ապադրարացման միջոցառումների շրջանակում իրականացնելով պարտադիր պահուստավորման մեխանիզմի փոփոխություններ: ՀՀ Կառավարությունը ևս համապատասխան քայլեր է ձեռնարկել ի դեմս նախորդ տարվա համեմատ ավելի ցածր պակասուրդի մակարդակի ծրագրման (ՀՆԱ-ի 3.9 տոկոս նախորդ տարվա 5 տոկոսի փոխարեն) և իրագործման: Հատկանշական է, որ պահանջարկի կարգավորման գործիքների ազդեցությունը անմիջապես չեն փոխանցվում գների վրա՝ անհրաժեշտ է որոշակի ժամանակային «լագ», որի ընթացքում տնտեսվարողները և տնային

տնտեսությունները կճշգրտեն իրենց սպառման վարքագծերը՝ այսպիսով կայունացնելով գնաճային միջավայրը պահանջարկի տեսանկյունից:

Երկրորդ կետում նշված ուղղության առնչությամբ պետք է նշել, որ կառավարությունը գյուղատնտեսության ոլորտին նպաստելու և լրացուցիչ առաջարկ ստեղծելու համար որոշ գործողություններ կատարեց, որի արդյունքներն արդեն տարվա երկրորդ կեսից սկսած ակնկալվում է տեսանելի լինել: Իսկ այդ միջոցառումներն էին, սերմնաբուծության զարգացման և պարարատանյութերի ձեռք բերման ծրագրերը, որոնց համար պահուստային ֆոնդից հատկացվել է 788.3 մլն դրամ:

Պետք է նշել նաև, որ Համաշխարհային շուկայում պարենային ապրանքների, առավել ևս միջանկյալ սպառմանն ուղղվող ապրանքների գների աճն իր որոշակի ազդեցությունն է թողնում հանրապետության սպառողական շուկայում գնագոյացման վրա: Իհարկե կառավարությունը հնարավորություն չունի միջազգային գների վրա ուղղակի ազդեցություն ունենալ, սակայն կարող է կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել ներքին տնտեսությունում դրանց սպեկուլյատիվ բարձրացումների դիմաց: Այդ նպատակով Հանրապետությունում առաջին անհրաժեշտության ապրանքների գների կայունացմանը և պետական կարգավորման լծակների կիրառմամբ դրանց չհիմնավորված բարձրացման կանխարգելմանն են ուղղված ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Միննույն ժամանակ խիստ հսկողության տակ է պահվում ներքին տնտեսությունում՝ սպառողական շուկաներում ներմուծված առաջին անհրաժեշտության պարենային մի շարք ապրանքների գները ինչպես նաև դրանց վրա անուղղակի ազդող շուկաներում հակամրցակցային դրսևորումները: Այս առումով ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի կողմից արդեն իսկ բացահայտվել են մի շարք դեպքեր և ձեռնարկվել կանխարգելիչ միջոցառումներ (այդ թվում նաև պատժամիջոցներ), որոնց վերաբերյալ հրապարակային տեղեկատվությունն ապահովված է:

Այս միջոցառումների արդյունքում ակնկալվում է մոտակա ամիսներին 12-ամսյա գնաճը նվազեցնել 10 տոկոսից ցածր մակարդակի, իսկ տարվա երկրորդ կեսից արդեն նվազման առավել արագ տեմպերով, հնարավորինս մոտեցնել այն նպատակային թիրախին: Ներկայումս ակնառու է արդեն գնաճային նշյալ զարգացումները, երբ տասներկուամսյա գնաճը մարտի պիկի՝ 11.5 տոկոսից արդեն իսկ ապրիլ ամսով նվազել է 8.9 տոկոսի:

Գնաճի զսպման ուղղությամբ վարվող քաղաքականությունը համահունչ է ներկա և սպասվող մակրոտնտեսական զարգացումներին և դրական նախապայմաններ է ստեղծում միջին ժամկետ և երկարաժամկետ հատվածներում տնտեսական ակտիվության բարձրացման համար: Նշված քաղաքականության մոտեցումներն ակտիվորեն աշխատում է թե պահանջարկի, թե առաջարկի գործոններով, թե կարճաժամկետ, թե երկարաժամկետ ժամանակային հորիզոնում և միջազգային կառույցների կողմից արժանացել է դրական գնահատականի:

Հարցապնդում 5. Հայրենադարձության խթանման և արտագաղթի կանխման ուղղությամբ իրականացվող քաղաքականության վերաբերյալ.

Ինչ գործնական քայլեր են արվել հայրենադարձության խթանման և Սփյուռքից Հայաստան ներգաղթի համալիր ծրագիր իրականացնելու ուղղությամբ:

Արդյոք իրականացվել է մոնիտորինգ՝ վերլուծելու և գնահատելու արտագաղթի պատճառները և միտումները: Ինչ գործնական քայլեր են ձեռնարկվել նոր թափ ստացած արտագաղթի կանխման ուղղությամբ:

Ինչ վերաբերում է “նոր թափ ստացած” արտագաղթ արտահայտությանը, տեղեկացնում ենք, որ մեզ հայտնի չէ վերջին շրջանում իրականացված որևէ հետազոտություն, որը հիմք կտար նման եզրահանգման համար: Իսկ եթե հարցապնդման հեղինակները ելել են ՀՀ սահմանակետերում ուղևորների հաշվառման հիման վրա հաշվարկված բացասական մնացորդից, ապա հարկ ենք համարում նկատել, որ, առաջին, 2010 թվականի համար արձանագրված մնացորդը էապես չի տարբերվում 2009 թվականի ցուցանիշից (-29900 և -25000 համապատասխանաբար), և երկրորդ, այդ թվի վրա հիմնվելով արտագաղթի չափերի մասին եզրակացություն անելը հիմնավոր չէ: Այդ ցուցանիշը ընդամենն արտացոլում է ՀՀ մուտք գործած և ՀՀ-ից մեկնած անձանց թվերի տարբերությունը, որտեղ չի երևում, թե նրանք ինչ նպատակով, ինչ ժամկետներով և ուր են մեկնում, այդ հոսքի որ մասն են կազմում մեր քաղաքացիները և որը՝ օտարերկրացիները:

Վերջին տարիներին իրականացված հետազոտությունները ¹²¹³ ցույց են տալիս որ **Հայաստանից մեկնելու հիմնական պատճառներն են՝** ընտանեկան հանգամանքները /ընտանիքների վերամիավորում/, աշխատանքի բացակայությունը, ցանկալի կենսամակարդակ ապահովելու համար միջոցներ վաստակելու անհնարիությունը, երկրի տնտեսական անորոշությունները, որը, ինչպես և ճգնաժամ ապրած այլ երկրներում, սրվեց ճգնաժամի հետևանքով և որի վերացման ուղղությամբ կառավարությունը իրականացնում է միջոցառումների շարք, (մասամբ նշված է 2-րդ կետում):

¹²<Արտաքին և ներքին միգրացիայի ընտրանքային հետազոտություն> Երևան 2007թ. ԱՎԾ

¹³<ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծություն> Երևան 2010թ.

Մասնավորապես այստեղ պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ՀՀ կառավարությունը 2010 թվականի դեկտեմբերի 30-ին թիվ 51 արձանագրային որոշմամբ հավանություն է տվել ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգին: Հայեցակարգում ներառված 14 գերակա խնդիրների շարքում տեղ է գտել նաև **օտարերկրյա պետություններից ՀՀ քաղաքացիների վերադարձի, ինչպես նաև հայրենիքում նրանց հետագա վերաինտեգրմանը ցուցաբերվող աջակցության խնդիրը**: Ներկայումս մշակվում է Հայեցակարգի իրականացմանն ուղղված գործողությունների ազգային ծրագիր, որը ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի 2011 թվականի հոկտեմբերին:

Հայրենադարձությանը խթանող ծրագրերի մշակումը և իրականացումը ՀՀ սփյուռքի նախարարության կարևորագույն ռազմավարական խնդիրներից են: Այդ նպատակով ՀՀ կառավարության 2008-2012 թվականների գործունեության Ծրագրով նախատեսվում է ներդնել օտարերկրյա պետություններում բնակվող մեր հայրենակիցների հայրենադարձությունը խթանող համակարգ:

ՀՀ սփյուռքի նախարարությունը իր գոյության 2,5 տարվա ընթացքում հայրենադարձության խթանման ուղղությամբ իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Մշակվել, Հայաստանում և Սփյուռքում լայնորեն քննարկվել է «Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման հայեցակարգ»-ի նախագիծը, որտեղ ամրագրվել է Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականության սկզբունքները, գերակա ուղղությունները և խնդիրները, այդ թվում ազգահավաքի և հայրենադարձության ոլորտում:

2. Ի կատարումն ՀՀ կառավարության 2008-2012 թվականների ծրագրի 4.4.7. կետի՝ մշակվել է «Հայրենադարձության գործընթացի կազմակերպման հայեցակարգ»-ի նախագիծ, որը քննարկվել է ՀՀ բոլոր շահագրգիռ կազմակերպությունների, սփյուռքի համահայկական և համայնքային կառույցների հետ: 2010 թվականի դեկտեմբերին համահայկական քննարկում անցած հայեցակարգը արժանացել է ՀՀ կառավարության հավանությանը: /կցվում է՝ 25 էջ/

3. Հետազոտվել և վերլուծվել է հայրենադարձության քննազավառում համաշխարհային փորձը (Իսրայել, Հունաստան, Լեհաստան, Մերձբալթյան երկրներ, Իտալիա և այլն):

4. Կազմակերպվել է «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» խորագրով համահայկական գիտագործնական համաժողով, ինչպես նաև միջազգային կլոր սեղան՝ «Հայրենադարձության օրենքի հիմնական խնդիրները» թեմայով, որին մասնակցել են Իսրայելից, Հունաստանից, Ռուսաստանի դաշնությունից եկած փորձագետներ:

5. Հայրենադարձության Հայեցակարգի դրույթների հիման վրա մշակվել և քննարկման է դրվել «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այն 2010թ. դեկտեմբերին ներկայացվել է ՀՀ կառավարություն: Օրենքով հայրենադարձների համար նախատեսված են մի շարք արտոնություններ, որոնք պետք է խթանեն այդ գործընթացը: Օրենքի ընդունումից հետո նախատեսվում է ստեղծել հայրենադարձության գործընթացը կազմակերպող հատուկ պետական գործակալություն:

6. 2010թ. մարտի 25-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել նաև ՀՀ սփյուռքի նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետությունում հաստատված իրաքահայերի ինտեգրման հայեցակարգ»-ը՝ որպես հայրենադարձությանն ուղղված միջոցառում: Ներկայումս շուրջ 750 իրաքահայերի համար ՀՀ-ում իրականացվում են ինտեգրման միջոցառումներ:

7. Երկքաղաքացիության և հայրենադարձության խրախուսման նպատակով ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ ՀՀ օրենքներում և ՀՀ կառավարության որոշումներում.

ա. կատարվել է լրացում ՀՀ կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-ի N 821 որոշման մեջ (ՀՀ կառավարության 2009թ. նոյեմբերի 29-ի N 1362 որոշում)՝ կապված սփյուռքահայերի անունների տառադարձությունների հետ,

բ. կատարվել են փոփոխություններ և լրացումներ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում (28.04.09 ՀՕ-108-Ն)՝ կապված ՀՀ մուտքի վիզայի վճարի նվազեցման հետ,

գ. կատարվել են փոփոխություններ ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 23-ի «ՀՀ քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու

համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և դրանք ներկայացնելու կարգը սահմանելու մասին N 1390-Ն որոշման» (ՀՀ կառավարության 2010թ. հունվարի 29-ի N 59-Ն որոշում),

դ. կատարվել է լրացում «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքում (2010 թվականի փետրվարի 25-ի ՀՕ-26-Ն)՝ կապված ՀՀ քաղաքացիություն ստանալու գործընթացի ընթացքում հաշվառման հետ ,

ե. կատարվել է փոփոխություն «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքում (2010 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-178-Ն)՝ կապված պարտադիր զինվորական ծառայությունից խուսափած քաղաքացիներին սահմանված ժամկետում համապատասխան վճարը մուծելու, Հայրենիք վերադառնալու և քրեական հետապնդումից ազատվելու հարցերի հետ:

8. Հայրենադարձության ծրագրերի խթանմանն են նաև մասամբ ուղղված եղել ՀՀ սփյուռքի նախարարության կողմից կազմակերպված համահայկական մասնագիտական համաժողովները: 2009-2011թթ. կազմակերպվել է թվով 11 մասնագիտական համաժողովներ և ստեղծվել են համապատասխան ընկերակցություններ, համահայկական ցանցեր: Ընդհանուր առմամբ համաժողովներին մասնակցել են շուրջ 2000 մասնագետ հայաստանից և Սփյուռքից:

9. ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող ամենաձավալուն միջոցառումներից է «Արի տուն» ծրագիրը, որը կոչված է հայապահպանությանը զուգահեռ խթանել հայրենադարձությունը: 2009թ. ծրագրին մասնակցել է 300, 2010թ.՝ 600 սփյուռքահայ երիտասարդներ, իսկ 2011թ.՝ կմասնակցի 800-ը:

10. Քանի որ հայրենադարձության գործընթացը նախկինում կանոնակարգված բնույթ չի կրել, դրա վերաբերյալ ճշգրիտ թվային տվյալներ հայտնի չեն: Սակայն հայրենադարձության ներկա տեմպերի մասին որոշակի գաղափար կարող են տալ հայրենադարձության հետ ուղղակիորեն առնչվող հետևյալ թվերը. 2006-2009թթ. Հայաստանի Հանրապետության կացության հատուկ և մշտական կարգավիճակ է ստացել շուրջ 3000 սփյուռքահայ, 2008-2010 թ.թ. ընթացքում շուրջ շուրջ 18000 սփյուռքահայեր դարձել են երկքաղաքացիներ, 2005-2009 թթ. ՀՀ-ում անշարժ գույք է գնել

շուրջ 15000 սփյուռքահայ, Ոչ լրիվ տվյալներով վերջին տարիներին հայրենադարձվել են շուրջ 500 սփյուռքահայեր:

11. ՀՀ սփյուռքի նախարարությունում կազմակերպվել է Հայաստանում հաստատված շուրջ 100 սփյուռքահայի հետ հանդիպում :

12. Նախարարության նախաձեռնությամբ վերլուծվել է ՀՀ օրենսդրությունը տպագրվել է <Ձեռնարկ այլ պետություններում ապրող հայերի համար> գիրքը, որով փորձ է արվում ծանոթացնել մեր հայրենակիցներին առավել անհրաժեշտ օրենքներին, որոշումներին: